



Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ

## Հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրի միջոցով

---

Հունիս, 2018թ., Հրապ.՝ 5084.10

### **Հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրի (MHP, Mental Health Plan) միջոցով**

Հոգեկան առողջության որոշ ծառայություններ մատչելի են «վճարում ծառայության դիմաց» Medi-Cal<sup>1</sup> մատակարարների կամ Medi-Cal-ի կողմից կառավարվող ինսամքի ծրագրերի միջոցով, մինչդեռ այլ ծառայությունները մատչելի են միայն Վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրերի միջոցով՝ հոգեկան առողջության մասնագիտացված ծառայության իրավունքի հրաժարման փաստաթղթի ներքո:<sup>2</sup> Այս հրապարկումը կենտրոնանում է հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունների վրա, որոնք մատչելի են Վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրերի (MHPs, Mental Health Plans) միջոցով:

---

<sup>1</sup> Եթե դուք օգտվում եք Medi-Cal-ի «վճարում ծառայության դիմաց» ծառայությունից, Դուք կարող եք այցելել ցանկացած մատակարարի, ով Medi-Cal ընդունում է: Սա նաև նշանակում է, որ Դուք ներառված չեք Medi-Cal-ի կառավարվող ինսամքի ծրագրում: - [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

<sup>2</sup> Բարեկեցության և հաստատությունների մասին օրենսգրքի § 14189. - [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

Հոգեկան առողջության՝ Medi-Cal-ի միջոցով մատչելի առողջապահական ծառայությունների վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար տե՛ս հրապարակում թիվ 5609.01-ը՝ [Medi-Cal-ի կողմից կառավարվող ինսամբի ծրագրերը և հոգեկան առողջության ծառայությունները](#):

## **Որո՞նք են հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունները:**

Հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունները կարող են ներառել հոգեկան առողջության վերականգնողական ծառայությունները, ստացիոնար հոգեբուժական հիվանդանոցային ծառայություններ, դեպքի նպատակային կառավարում, հոգեբուժական ծառայություններ, հոգեբանական ծառայություններ EPSDT<sup>3</sup> հոգեկան առողջության լրացուցիչ մասնագիտացված ծառայություններ և ծերանոցների հոգեբուժական ծառայություններ:<sup>4</sup> Առանձնահատուկ ընդգրկվող ծառայությունների ավելի մանրամասն ցանկը մատչելի է ստորև: Հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունները տրամադրվում են հոգեկան առողջության մասնագետների կողմից, ինչպիսիք են հոգեբույժները, հոգեբանները, արտոնագրված կլինիկական սոցիալական աշխատողները (LCSWs, Licensed clinical social workers), ամուսնության և ընտանիքի արտոնագրված մասնագետները (MFTs, Marriage and family therapists), հոգեբուժական տեխնիկական սպասարկման աշխատողները կամ հասակակիցներին աջակցություն տրամադրողները: Ձեր առաջնային ինսամբի բժիշկը կամ ֆիզիկական առողջության այլ մատակարարը նույնպես կարող է

---

<sup>3</sup> Վաղ և պարբերաբար կատարվող սքրինինգը, ախտորոշումը և բուժումը (EPSDT, Early and Periodic Screening, Diagnostic and Treatment) Medicaid-ի երեխաների առողջության բաղադրիչ մաս է կազմում: Դաշնային կանոնադրությունները և կանոնակարգերը սահմանում են, որ 21 տարեկանից ցածր երեխաները, ովքեր ներառված են Medicaid-ում, EPSDT-ի նպաստներից օգտվելու իրավունք ունեն, և որ նահանգները պետք է ապահովագրեն կանխարգելիչ և բուժման ծառայությունների զգալի մասը: - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

<sup>4</sup> 9 C.C.R. § 1810.247(a-g).

հոգեկան առողջության ընդհանուր ծառայություններ տրամադրել, եթե Դուք երկուսդ համաձայնեք: Սակայն, դրանք չեն համարվում հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ:

**Ինչպե՞ս են տրամադրվում հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունները:**

Հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունները տրամադրվում են Medi-Cal-ի նպաստառուներին՝ վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրերի MHPs, միջոցով:<sup>5</sup> Բոլոր MHP-ները վարչաշրջանի հոգեկան առողջության կամ վարքագծային առողջության վարչությունների մաս են կազմում:<sup>6</sup> MHP-ը կարող է ծառայություններ տրամադրել իր սեփական աշխատակիցների կամ պայմանագրային մատակարարների միջոցով:<sup>7</sup>

**Որո՞նք են հոգեկան առողջության այն մասնագիտացված ծառայությունները, որոնց իրավունքը ես ունեմ:**

Դուք հոգեկան առողջության մասնագիտացված ծառայության իրավունք ունեք, եթե ծառայությունը և՛ Medi-Cal ծրագրի ներքո ապահովագրված է և՛ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է Ձեզ: Ապահովագրված ծառայությունները տրամադրվում են միայն այն դեպքում, երբ դրանք նաև բժշկական տեսանկյունից են անհրաժեշտ:<sup>8</sup>

**Հոգեկան առողջության ո՞ր մասնագիտացված ծառայություններն են ապահովագրված:**

---

<sup>5</sup> Կալիֆորնիայի Բարեկեցության և հաստատությունների. օրենսգիրք § 14680(b):

<sup>6</sup> Կալիֆորնիայի Բարեկեցության և հաստատությունների. օրենսգիրք § 14680(d):

<sup>7</sup> 9 C.C.R. § 1810.436(a).

<sup>8</sup> 9 C.C.R. §1810.345(a).

Հոգեկան առողջության ամբուլատոր մասնագիտացված ծառայությունները **ապահովագրվում են**, եթե դրանք առկա են հետևյալ ցանկում:<sup>9</sup>

- (a) Հոգեկան առողջության վերականգնողական ծառայություններ, այդ թվում
  1. Հոգեկան առողջության ծառայություններ
  2. Դեղորայքային աջակցության ծառայություններ
  3. Ինտենսիվ ցերեկային բուժում
  4. Ցերեկային վերականգնողական ծառայություններ
  5. Ճգնաժամի միջամտություն
  6. Ճգնաժամի կայունացում
  7. Չափահասների կացարանային բուժման ծառայություններ
  8. Ճգնաժամային բուժման ծառայություններ կացարաններում
  9. Առողջապահական հաստատություններում հոգեբուժական ծառայություններ
- (b) Ստացիոնար հիվանդանոցային հոգեբուժական ծառայություններ
- (c) Գործի նպատակային կառավարում
- (d) Հոգեբուժական ծառայություններ
- (e) Հոգեբանական ծառայություններ
- (f) EPSDT հոգեկան առողջության լրացուցիչ մասնագիտացված ծառայություններ (21 տարեկանից ցածր տարիքի անձանց համար) և
- (g) Ծերանոցների հոգեբուժական ծառայություններ

Այս հուշագրում քննարկվում են միայն ամբուլատոր ծառայությունները

«Հոգեկան առողջության ծառայությունները» ներառում են անհատական կամ խմբային բուժումներ և միջամտություններ, որոնք կարող են նվազեցնել հոգեկան առողջությանն առնչվող հաշմանդամությունը և վերականգնել, բարելավել կամ պահպանել գործառնությունը: Դրանք կարող են օգնել սովորելուն, զարգանալուն, անկախ ապրելակերպից, և հզորացնեն ինքնաբավությունը. դրանք չեն տրամադրվում որպես հոգեկան առողջության մեկ այլ ծրագրի մաս

---

<sup>9</sup> 9 C.C.R. § 1810.247 «Հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ»: f- ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

(օրինակ՝ որպես ցերեկային կամ կացարանային ծրագիր): Ծառայության գործողությունները կարող են ներառել գնահատում, ծրագրի զարգացում, բուժում, վերականգնում և առնչվող ծառայություններ:<sup>10</sup>

«Վերականգնումը» լայն հասկացություն և ծառայություն է, որը ներառում է օգնություն բարելավելու, պահպանելու կամ վերականգնելու գործառույթը, ամենօրյա կյանքը, սոցիալական կյանքը և հանգիստը, խնամքը և անձնական հիգիենայի հմտությունները, ուտեստների պատրաստումը, աջակցության ռեսուրսները և դեղորայքային կրթությունը:<sup>11</sup>

«Գործի նպատակային կառավարումը» ծառայություն է, որը կարող է օգնել Ձեզ՝ օգտվելու անհրաժեշտ բժշկական, կրթական, սոցիալական, նախամասնագիտական, մասնագիտական, վերականգնողական կամ այլ համայնքային ծառայություններից, այդ թվում կացարանից: Սա կարող է արվել հաղորդակցման, համակարգման, ուղղորդման, տեղադրման, ծրագրի զարգացման և մշտադիտարկման առաջընթացի և ծառայությունների միջոցով՝ տվյալ ծառայություններից օգտվելը երաշխավորելու համար:<sup>12</sup>

### **Ի՞նչ է նշանակում «բժշկական տեսանկյունից անհրաժեշտ»:**

Ծառայությունը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, եթե Դուք այդ ծառայության կարիքն ունեք, որպեսզի զբաղվեք Ձեր հոգեկան առողջության առանձնահատուկ խնդրով: Նույնիսկ եթե Ծառայությունը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է Ձեզ, այն սաև պետք է ապահովագրված ծառայություն լինի Medi-Cal ծրագրի կողմից, որպեսզի Դուք դրա իրավունքն ունենաք:

Գոյություն ունեն բժշկական տեսանկյունից անհրաժեշտ լինելու չորս մասից բաղկացած չափորոշիչներ.

---

<sup>10</sup> 9 C.C.R. § 1810.227

<sup>11</sup> 9 C.C.R. § 1810.243

<sup>12</sup> 9 C.C.R. § 1810.249

1. Դուք պետք է **ստորև նշված** կանոնակարգերում թվարկված հոգեկան առողջության առնվազն մեկ խնդիր ունենաք<sup>13</sup>

- Չարգացման համատարած դժվարություն, բացի աուտիստիկ խնդիրներից
- Կարքագծային և ուշադրության բացակայության դժվարություններ
- Նորածնային և վաղ մանկության շրջանում սնվելու և ուտելու դժվարություններ
- Արտաթորման դժվարություններ
- Նորածնային շրջանի, մանկության կամ դեռահասային շրջանի այլ դժվարություններ
- Շիզոֆրենիա կամ հոգեբուժական այլ խնդիրներ, բացի այն հոգեբուժական խնդիրներից, որոնք առաջացել են ընդհանուր առողջական խնդիրների պատճառով
- Տրամադրության խնազարումներ, բացի տրամադրության խանգարումների այն դեպքերից, որոնք առաջացել են ընդհանուր առողջական խնդիրների պատճառով
- Տագնապային վիճակի խնդիրներ, բայց այն տագնապային վիճակի խնդիրներից, որոնք առաջացել են ընդհանուր առողջական խնդիրների պատճառով
- Սոմատիկ ախտանիշների խանգարում
- Անբնական խանգարումներ
- Տարրաբաժանող խանգարումներ
- Սեռական հակումների աղավաղումներ
- Սեռական ինքնության խանգարումներ
- Սնվելու խանգարումներ
- Խթանիչների վերահսկման խանգարումներ, որոնք ոչ մի տեղ դասակարգված չեն
- Կարգավորման խանգարումներ
- Անհատականության խանգարումներ, բացառությամբ ինքնամփոփ անհատականության խանգարումների
- Դեղորայքի միջոցով առաջացած տեղաշարժման խանգարումներ, որոնք այլ ներառված խանգարումների հետ առնչություն ունեն:

---

<sup>13</sup> 9 C.C.R. § 1830.205(b)(1)(A-R)

2. Դուք պետք է վնասվածք ունենաք, որը խանգարման արդյունք է և որն ազդում է անհատապես կամ համայնքում գործելու Ձեր ունակության վրա:<sup>14</sup>
3. **Միջամտությունը**(հոգեկան առողջության ծառայություն, որի կարիքն ունեք) պետք է կենտրոնանա վնասվածքը վերացնելու վրա:<sup>15</sup>
4. Միջամտությունը պետք է բավարարի **հոգեկան առողջության մասնագիտացված ծառայության չափորոշիչները**: Սա նշանակում է, որ Ձեր առողջական խնդիրը պետք է արագ արձագանքի հոգեկան առողջության բուժմանը, բայց չպետք է արձագանքի ֆիզիկական առողջության խնամքի վրա հիմնված բուժմանը:<sup>16</sup>

Եթե Դուք 21 տարեկանից փոքր եք, բայց չեք բավարարում 9 C.C.R. § 1830.205(b)(2-3)-ում սահմանված բժշկական տեսանկյունից անհրաժեշտության պահանջները, Դուք դեռ կարող եք ծառայություններ ստանալ, եթե վերոնշյալ ախտորոշումներից մեկը ունեք, և այդ առողջական խնդիրը, որն ունեք չի արձագանքի ֆիզիկական առողջության խնամքի բուժմանը:<sup>17</sup>

### **Ի՞նչ տեղի կունենա, եթե ես մեկից ավելի ախտորոշում ունենամ:**

Եթե Դուք այնպիսի ախտորոշում ունեք, որը ներառված չէ ցանկում, ապա այն չի խանգարի, որպեսզի Դուք ծառայություններ ստանաք, քանի դեռ Դուք առնվազն մեկ ախտորոշում ունեք, որը ներառված է ցանկում: Եթե Դուք մեկից ավելի ախտորոշում ունեք, բայց Ձեր ախտորոշումներից առնվազն մեկը վերոնշյալ ցանկում է, ապա Դուք

---

<sup>14</sup> 9 C.C.R. § 1830.205(b)(2)(A-B).

<sup>15</sup> 9 C.C.R. § 1830.205(b)(3)(B)(1-2).

<sup>16</sup> 9 C.C.R. § 1830.205(b)(3)(C).

<sup>17</sup> 9 C.C.R. § 1830.210(a)(1-3).

կշարունակեք հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ ստանալ:<sup>18</sup>

**Ինչպե՞ս պետք է հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ ստանամ:**

Դուք պետք է ծառայությունը խնդրեք Ձեր վարչաշրջանի MHP-ից, այսինքն՝ Վարչաշրջանի հոգեկան կամ վարքագծային առողջության վարչությունից: Եթե Դուք այս պահին ծառայություններ չեք ստանում, Դուք կարող եք զանգահարել MHP-ից օգտվելու հեռախոսագծին և գնահատում խնդրեք: Տե՛ս Կալիֆորնիայի հոգեկան առողջության վարչության կայքէջը՝ MHP-ից օգտվելու հեռախոսագծի անվճար հեռախոսահամարների ցանկը տեսնելու համար: Ցանկը մատչելի է՝ <http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContactList.aspx>.

Ծառայությունները պետք է Ձեզ տրամադրվեն այն ժամանակ, երբ դրանց կարիքն ունեք: Սա նշանակում է, որ Դուք չեք կարող սպասողների ցանկում տեղադրվել: Այն նաև նշանակում է, որ Ձեզ չեն կարող ասել զանգահարեք ավելի ուշ, որովհետև պայմանավորվածությունների բոլոր տեղերը լեցուն են: Դուք պետք է առնվազն ծառայություններից օգտվելու Ձեր կարիքի գնահատում անցնեք:

**Ես հաստատո՞ւմ եմ հաճախորդի իմ ծրագիրը և ծառայությունները:**

Այո: Ձեր «հաճախորդի ծրագիրը» պետք է ներառի հոգեկան առողջության մասնագիտացված այն ծառայությունները, որոնց իրավունքը Դուք ունեք, ինչպես նաև այն փաստաթուղթը, ըստ որի Դուք համաձայն եք: Դուք կարող եք ստորագրել ծրագիրը կամ Ձեր մատակարարը կարող է նշել, որ Դուք համաձայն եք և մասնակցում եք Ձեր ծրագրին:<sup>19</sup>

---

<sup>18</sup> 9 C.C.R. § 1830.205(c).

<sup>19</sup> 9 C.C.R. 1810.205.2 և 440(c).



**Ի՞նչ տեղի կունենա, եթե ես գոհ չեմ իմ ծառայություններից կամ եթե իմ MHP-ն մերժում, նվազեցնում կամ ժամանակավորապես դադարեցնում է ծառայությունները:**

Եթե Դուք բացասական փորձ եք ունեցել Ձեր MHP-ի հետ, Դուք կարող եք գանգատ ներկայացնել: Եթե Ձեր ծառայությունները փոխվեն կամ Ձեզ մերժեն այն ծառայությունները, որոնց իրավունքը Ձեր կարծիքով Դուք ունեք, Դուք կարող եք բողոք ներկայացնել: Առողջապահական ծառայությունների վարչությունը վերջերս հուշագիր թողարկեց, որտեղ քննարկվում են գանգատների և բողոքների գործընթացները, որոնք Դուք կարող եք դիտել հետևյալ հղմամբ՝

<http://www.dhcs.ca.gov/formsandpubs/Documents/MMCDAPLsandPolicyLetters/APL2017/APL17-006.pdf>

Disability Rights California-ն սույնպես հրապարակում է թողարկել, որտեղ քննարկվում են գանգատների և բողոքների գործընթացները, [հրապարակում թիվ 7134.01. վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրի \(MHP\) գանգատները, բողոքները և արդար լսումները](#)

### **Հոգեկան առողջության ծառայությունների ժամանակի և հեռավորության չափորոշիչները<sup>20</sup>**

2018թ. հուլիսից սկսած նոր կանոններ կկիրառվեն առ այն, թե վարչաշրջաններն ինչպես են ծառայություններ տրամադրում: Վարչաշրջաններից կպահանջվի ծառայությունները տրամադրել Ձեր բնակավայրից որոշակի հեռավորության և որոշակի ժամանակահատվածի շրջանակներում: Մանրամասները նշված են ստորև:

---

<sup>20</sup> Առողջապահական ինսամբի ծառայությունների վարչություն, MHSUDS տեղեկատվական ծանուցում թիվ՝ 18-011, փետրվար, 13, 2018թ., *մատչելի է՝*

[http://www.dhcs.ca.gov/services/MH/Documents/Information%20Notices/IN%2018-%20Network%20Adequacy/MHSUDS\\_IN\\_18-011\\_Network\\_Adequacy.pdf](http://www.dhcs.ca.gov/services/MH/Documents/Information%20Notices/IN%2018-%20Network%20Adequacy/MHSUDS_IN_18-011_Network_Adequacy.pdf), pg 6. - [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

քաղաքային վարչաշրջանները պետք է խնամքը տրամադրեն նպաստառուի բնակավայրից 60 մղոն կամ 90 րոպե հեռավորությամբ: Այս վարչաշրջանները ներառում են՝

- Alpine, Calaveras, Colusa, Del Norte, Glenn, Humboldt, Imperial, Inyo, Lassen, Mariposa, Mendocino, Modoc, Mono, Plumas, San Benito, Shasta, Sierra, Siskiyou, Tehama, Trinity, և Tuolumne

Փոքր վարչաշրջանները պետք է խնամքը տրամադրեն նպաստառուի բնակավայրից 45 մղոն կամ 75 րոպե հեռավորությամբ: Այս վարչաշրջանները ներառում են՝

- Amador, Butte, El Dorado, Fresno, Kern, Kings, Lake, Madera, Merced, Monterey, Napa, Nevada, San Bernardino, San Luis Obispo, Santa Barbara, Sutter, Tulare, Yolo, և Yuba

Միջին չափի վարչաշրջանները պետք է խնամքը տրամադրեն նպաստառուի բնակավայրից 30 մղոն կամ 60 րոպե հեռավորությամբ: Այս վարչաշրջանները ներառում են՝

- Marin, Placer, Riverside, San Joaquin, Santa Cruz, Solano, Sonoma, Stanislaus և Ventura

Մեծ վարչաշրջանները պետք է խնամքը տրամադրեն նպաստառուի բնակավայրից 15 մղոն կամ 30 րոպե հեռավորությամբ: Այդ վարչաշրջանները ներառում են՝

- Alameda, Contra Costa, Los Angeles, Orange, Sacramento, San Diego, San Francisco, San Mateo և Santa Clara

### **Պայմանավորվածությունների և ժամանակին հասնելը<sup>21</sup>**

Առողջապահական խնամքի բոլոր այն ծառայությունները, որոնք մատուցում կամ կազմակերպում են հիվանդանոցի կամ բժշկի ծառայությունների տրամադրման համար, այդ թվում հոգեկան առողջության մասնագիտացված ծրագրերը, որոնք բժշկի կամ հիվանդանոցային ծառայություններ են մատուցում, կամ որոնք ծառայության ամբողջական ծրագրով հոգեկան առողջության

---

<sup>21</sup> 28 C.C.R. section 1300.67.2.2(c)(5).

ծառայություններ են մատուցում պայմանագրի համաձայն, պետք է ծառայությունները ժամանակին տրամադրեն:

Մասնավորապես, հետևյալ ծառայությունները պետք է մատչելի դառնան հետևյալ ժամանակահատվածներում:

Անհետաձգելի խնամքի պայմանավորվածությունները, որոնք նախնական լիազորություն չեն պահանջում, պետք է 48 ժամվա ընթացքում տրամադրվեն. Մինչդեռ անհետաձգելի խնամքի այն ծառայությունները, որոնք նախնական լիազորություն են պահանջում, պետք է 96 ժամվա ընթացքում տրամադրվեն.

Առաջնային խնամքի ոչ հրատապ պայմանավորվածությունները պետք է տրամադրվեն 10 աշխատանքային օրվա ընթացքում. Ոչ հրատապ, մասնագետի հետ (հոգեբույժ) պայմանավորվածությունները պետք է տրամադրվեն 15 աշխատանքային օրվա ընթացքում. Ոչ հրատապ, հոգեական առողջության մատակարարի (ոչ հոգեբույժ) հետ պայմանավորվածությունները պետք է տրամադրվեն 10 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հավելյալ ծառայությունների ոչ հրատապ պայմանավորվածությունները, որոնք նախատեսված են վնասվածքի, հիվանդության կամ այլ առողջական խնդիրների ախտորոշման կամ բուժման համար, պետք է տրամադրվեն 15 աշխատանքային օրվա ընթացքում:

Չեռախոսով զանգահարելու դեպքում սպասման ժամանակահատվածը պետք է գերազանցի 10 րոպեն: Դասակարգված ծառայությունները պետք է շուրջօրյա (24/7) մատչելի լինեն, իսկ հետզանգի ժամանակահատվածը չի կարող գերազանցել 30 րոպեն:

### **Ժամանակին օգտագործում. սահմանափակ բացառություններ**

Այնուամենայնիվ, գոյություն ունեն պայմանավորվածությունների սահմանափակ թվով բացառություններ.

Օրինակ, երկարաձգված պայմանավորվածությունների դեպքում,<sup>22</sup> երբ ուղղորդող կամ բուժող բժիշկը սպասման ավելի երկար ժամանակ է սահմանել, որը վնասակար ազդեցություն չի ունենա նպաստառուի առողջության վրա\* և նշել է այս բացառությունը արձանագրության մեջ, ապա հաջորդ պայմանավորվածության ժամանակացույցը կարող է վերոնշյալ ժամանակահատվածից երկարաձգվել:

Բացի այդ, այն անձինք, ովքեր պարբերաբար այցելություններ են ունենում, կարող են այցելությունների միջև ընկած ավելի երկար ժամանակահատվածներ ունենալ, և կարող են այդ պայմանավորվածությունները նախապես պլանավորել:<sup>23</sup>

---

<sup>22</sup> 28 C.C.R. section 1300.67.2.2(c)(5)(G).

<sup>23</sup> 28 C.C.R. section 1300.67.2.2(c)(5)(H).